Հաստատվում է
Էջեանի միջն. դպրոցի տնօրեն՝
Գ. Մանասյան
31.08.2022թ.

Էջեանի միջնակարգ դպրոցի

Հումանիտար մասնախմբի

2022-2023 ուստարվա

Աշխատանքային պլան

Նիստ 1-ին

1. Քննարկում՝ ուստարվա ընթացքում կազմակերպվող միջոցառումներին հումանիտար մասնախմբի մասնակցության շուրջ (հանձնարարականներ):
2. Ուսացանող գնահատականի ձևավորման հարցեր:Աշխատանքի տեսակների ընդլայնման ուղղությունների առաջքաշում և քննարկում:
3. Ուսուցչի տոնի կապակցությամբ

ա.5-12 -րդ դասարաններում հանձնարարվող գրավոր աշխատանքի տեսակի քննարկում:

բ. Միջոցառման պլանի մշակում:

4. «Սովորողների մտավոր, ֆիզիկական, հոգևոր և սոցիալական զարգացման հարցեր» (զեկուցում):
5. Ուստարվա մեկնարկին վերաբերող ընթացիկ հարցեր (աշխատանքային, թեմատիկ տետրերի, նոր մեթոդական գրականության ձեռնարկների ձեռքբերման մասին):

Նիստ 2-րդ

1. Առաջանցիկ ուսուցման կազմակերպման մասին: Ժողովրդավարության պահանջներին համապատասխան դպրոցականների մտահորիզոնի ընդլայնմանը, բազմակարծության արմատավորմանն ու կենսագործունեությանը միտված մեթոդների մասին:
2. Բանավեճի թեմա- «Ինչպիսի՞ն պետք է լինի դպրոցականը»: Ինչպե՞ս կարելի է դրականորեն ազդել կամ անհեռատեսորեն խանգարել դպրոցականի կայացմանը (ո՞րն է ճիշտ).

ա. Միշտ զովաբանել:

բ. Սխալ ասվածի համար ծաղրել:

գ. Միշտ պարսավել, ամոթանք տալ:

դ. Հաճախակի ներել անբավարար գնահատականը:

ե. Թույլ հնարավորություններով աշակերտներին հեռու պահել կոլեկտիվ աշխատանքից:

զ. Սովորողին որևէ հատկանիշի հիման վրա հաճախակի առանձնացնել:

3. «Ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերում, ինքնուրույն կյանքի նախապատրաստում» (զեկուցում):

Նիստ 3

1. Աշխատանքային գործունեությամբ սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նպաստող հանգամանքների խթանումը: «Ընտանեկան կյանքի պաշտպանվածության ապահովումը կատարվում է նաև լավ մասնագետ լինելու արդյունքում» նշանաբանի մեկնաբանում սովորողների շրջանում:

2. Տրամաբանության զարգացման ուսուցման ձևերի ներդրումը: Այն է.

ա. նախագծային աշխատանք

բ. ստեղծագործական աշխատանք

գ. քննադատական ելույթ

3. Դպրոցական օլիմպիադայի համար նախատեսվող առաջադրանքների քննարկում և համակարգում:

4. Մայրենիի դրվածքի ուսումնասիրմանն ուղղված ստուգման ձևերի մասին (դասալսում, բավարար հարցում, գրավոր հարցաշար): Նպատակներից մեկը՝ հայոց լեզվի և գրականության ինտեգրման նպատակահարմարության հարցն է մեկ դասագրքում:

5.Տարեմուտի հանդեսի ծրագրի քննարկում և շտում (ըստ անհրաժեշտության):

6. «Երեխայի ընտանիքի դերը նրա ուսումնառության գործում» (զեկուցում):

Նիստ 4

1. Մայրենիի դրվածքի ուսումնասիրության արդյունքների քննարկում: Ուսուցիչների կարծիքը հիմնական դպրոցում «Մայրենի անցնելու մասին»:
2. Լսել պատմության դրվածքի ուսումնասիրության նպատակների և խնդիրների մասին: Ըստ այդմ՝

ա. Անցկացնել «Պատմություն» առարկայի տասնօրյակ:

բ.Կազմակերպել էքսկուրսիա դեպի պատմամշակութային հուշարձաններ:

3. Անհատական աշխատանքի ձևերի և համագործակցային աշխատանքի նմանություններն ու տարբերությունները: Անհատականը՝ որպես տրամաբանության զարգացման խթանող միջոց:
4. Թեմատիկ պլանների, ծրագրերի կատարողականի մասին: Դպրոցական օլիմպիադայի քննարկում:
5. Փոփոխություններ դասաբաշխման մեջ՝ կապված 12-րդ դասարանի առարկայացանկի փոփոխման հետ:
6. «Ապագա քաղաքացու ձևավորումը» մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների ամենօրյա հոգածության ներքո (զեկուցում):

Նիստ 5-րդ

1. «Պատմության» դրվածքի ուսումնասիրմանն ուղղված քննարկում:
2. Երիտասարդ ուսուցիչների մասնագիտական կարողությունների, մանկավարժական հմտությունների բացահայտմանը նպաստող գործողությունների քննարկում: Առաջարկվող ձևեր.

ա. Դասալսում:

բ. Դասավանդման փորձի փոխանակում:

գ. Մանկավարժական համալիր գործունեության յուրացում (գիտելիք, վերաբերմունք, հարգանք աշակերտի հանդեպ, հանդուրժողականություն, անաչառություն):

3. Ներառական կրթության մեջ ներգրավված աշակերտների ԱՈՒՊ-ների կատարման ընթացքի՝ դժվարությունների, ձեռքբերումների մասին:

4. Շարադրության մրցույթ՝ ուղղված հայոց բանակի կազմավորման 31-ամյակին (« Կյանքից էլ թանկ»):

5.Հանրակրթության բնագավառի սկզբունքները. «Մարդու կյանքի և առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնահերթությունը»:

Նիստ 6 -րդ

1. Ռուսաց լեզվի և անգլերենի ուսուցման դրվածքների ուսումնասիրման կամ ստուգման քայլաշար:

ա. Դասալսում (բանավոր հաղորդակցություն):

բ. Որևէ տեսակի գրավոր աշխատանք:

գ. Համատեղ երկլեզվյան միջոցառում:

2. Հայոց լեզվի և (հ.) գրականության դասավանդման դրվածքի մի քանի հիմնահարցեր՝ որպես ձևավորվող արժեհամակարգ:

ա. Ապագա քաղաքացու դաստիարակություն:

բ. Արժանապատվություն:

գ. Հայրենասիրություն:

դ. Պատասխանատվություն:

3. Միավորային գնահատականների աճման կամ նվազման միտումը ստուգման տարբեր ձևերի արդյունքում:

4.«Քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների նկատմամբ հարգանքը» (զեկուցում):

Նիստ 7-րդ

1. Ռուսաց լեզվի և անգլերենի դրվածքների ուսումնասիրության քննարկում:
2. Արժեհամակարգի վերջնարդյունքի ձևավորումը ներառական կրթության ոլորտի սովորողների շրջանում:
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացում:
4. Կանանց միամսյակին (մարտի 8-ապրիլի 7) նվիրված

ա. Միջոցառման ծրագրի մշակում:

բ. Շարադրության մրցույթ («Հերոսների հերոսուհի մայրերը»):

գ.Լավագույն բանաստեղծության և պատմվածքի մրցույթ՝ նվիրված մորը (առհասարակ կին արարածին):

5. Փորձնական քննություն անցկացնելու նպատակով 9-րդ և 12-րդ դասարանների ծրագրերին համապատասխան թեստային առաջադրանքների մշակում հումանիտար մասնախմբի առարկաների գծով:

6. «Արժանապատվություն, հայրենասիրություն, պատասխանատվություն». զեկուցում:

Նիստ 8-րդ

1. Փորձնական քննության արդյունքների վերլուծություն:
2. Ոչ քննական դասարաններում մասնախմբի բոլոր առարկաների գծով տարեվերջյան ամփոփիչ բանավոր և գրավոր հարցաշարեր կազմելու մասին: Միջառարկայական կապերի դրսևորման մասին. անհատական ելույթներ:
3. «Ապրելու ապրիլ» վերնագրով շարադրություն հանձնարարել 10-12-րդ դասարաններում: Զրույց քննարկում 5-9-րդ դասարանցիների հետ հայ ժողովրդի մայիսյան հաղթանակների վերաբերյալ:
4. Թելադրության միջոցով վայելչագրության ստուգում միջին դպրոցում:

5. Դասավանդման որակի և ուսման իրական վիճակի վերլուծություն:
6. Բնապահպանական աշխարհայացքի ձևավորում:

Նիստ 9-րդ

1. Առարկայական ծրագրերի կատարողականի մասին բոլոր դասարաններում:
2. Ոչ քննական դասարաններում ամփոփիչ գնահատումների վերլուծություն:
3. Ցածր միավորներ վաստակած աշակերտների համար տնօրենության թույլտվությամբ հունիս ամսին կազմակերպել տասնօրյա լրացուցիչ դասընթաց:
4. Աշակերտության շրջանում հետադարձ կապ ապահովելու, թերացումների և ակնկալիքների մասին օբյեկտիվ կարծքի լսելու համար հարցաշարի մշակում և անցկացում մինչև ուսումնական տարվա ավարտը:
5. Հանրակրթության ոլորտի որակի շարունակական բարելավումը, միջազգային կրթական համակարգին ինտեգրումը:

Նիստ 10-րդ

1. Քննաշարջանի ամփոփում:
2. Մասնախմբի կատարած աշխատանքների հաշվետվություն:
3. Մասնախմբի անդամ ուսուցիչների առարկայական հաշվետվություններ:
4. ԿԱՊԿՈ երեխաների ԱՈՒՊ – ների կատարողականի մասին հաշվետվություն:

Նիստ 11-րդ

1. Ուսումնական հաստատության հումանիտար մասնախմբի կազմի հաստատում:
2. Մասնախմբի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և տնօրենի հաստատմանը ներկայացում:
3. 2022-2023 ուստարվա՝ ուսպլանով նախատեսված ժամաքանակների, դպրոցական բաղադրիչների բաշխման և մանկավարժական խորհրդին ներկայացնելու մասին:
4. 2022 – 2023 ուստարվա 5-12-րդ դասարանների՝ մասնախմբի բոլոր առարկաների թեմատի պլանների քննարկում, տնօրենի հաստատմանը ներկայացում: Թեմատիկ և գործնական աշխատանքների քանակների սահմանման մասին:
5. Գրադարանավարի հաշվետվությունը գրքերով ապահովվածության մասին:
6. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում: